

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՊՐԻԼ 30, 1888 Մ. Է.Ժ.Մ.Ա.Ծ.Ի.Ն

Ասած է. « Նառն արմատով է ծառ և տունն հիմամբ է տուն » : Եթէ ուզում ենք, որ ծառն աճի, զօրանայ, իւր ճիւղերն ու տերեւներն էլ զարգացնէ, պէտք է նորա արմատի զօրացման վերայ հոգանք, ժամանակին ջուրն անպակաս անելով և նրան շրջապատող հողն պարարտացնելով։ Եթէ ուզում ենք, որ մեր շինած տունն ամուր լինի, հեղեղից և փոթորկից երկիւլ չկրէ, պէտք է նորա հիմն ամուր ձգենք, ոչ աւազի այլ ժայռի վերայ նրան դնենք։ Այս անժխտելի ճշմարտութիւն է մարդկային կեանքի համար, ոչ թէ միայն նիւթական իրերի վերաբերութեամբ, այլ և հոգեսոր ու բարոյական հաստատութեանց վերաբերմամբ։ Մարդուս բոլոր կեանքի ղեկավարն է նորա դաստիարակութեան հիմն, եթէ նա խախուտ է և անհաստատ, այնպիսի մարդու կենցաղավարութիւնը կներկայացնէ տատանուող և փոփոխուող, ամեն բանից խռովող և ամեն կողմից շարժուող վիճակ. այնպիսին իւր գործունէութեան մէջ անհաստատ, իւր ուղղութեան մէջ փոփոխուող կլինի և ոչ միայն իրան անօգուտ, այլ և այլոց վատ օրինակ կդառնայ և գործքերին վնասակար, մանաւանդ երբ նա որեւէ հասարակական գործի գլուխ անցած է և ըստ բերման հանգամանաց ղեկավար իրանից աւելի ստոր մտաւոր կարողութիւն ունեցողների, որոնք անդիտակայաբար հետեւելով իրանց առաջնորդին ի վնաս անձանց կգործեն։ Այսպիսի դէպքերի օրինակներ նկատելի են ամեն հասարակութեանց կեանքի մէջ և մանաւանդ այնպիսեաց մէջ, որոնք դեռ ևս սակաւ զարգացումն ունին և դատապարտուած են միշտ հետեւելու առանց կըուաղատութեան նորակիրթ, անփորձ, թերուս և անձնապաստան ղեկավարների ցուցմանց։

Այսպիսեաց շարքում են մեծ մասսամբ ներկայում և մեր հայ հասարակութիւնք, որոնք ամեն ուրեք նոր սկսում են զարգացման ճանապարհի վերայ կանգնիլ, բնազդաբար զգալով կարեւորութիւնը, փոխուելու մտաւորապէս և հոգեսորապէս, ուրպէս զի վերածնեն և ներկայիս հարկաւոր ոյժն ու խաղաղու-

թիւնն ստանան և մարդկութեան առողջ ու զօրեղ անդամաց կենակցեն և սոցա նման և սոցա պէս գործեն ինքնուրոյնութեամբ։ Այսպիսի ձգաման ժամանակ, երբ մարդս տեսնում է իւր ունեցածի ոչնչութիւնն և ձեռք բերելիք անհրաժեշտ պիտոյից անհունութիւնը, գործում է յափշտակութեամբ, առանց խիստ կշռադատութեան և ընտրութեան. ուստի և յաճախ ընկնում է սխալմանց մէջ, և եթէ ինքը այլոց էլ դեկավարող է, քարշում է իւր հետ և սոցա ու սխալմանց մէջ ձըգում։ Որպէս զի մեր հասարակական գործիչք բարեմտութեան և բուռն ցանկութեան հետեւանք եղող յափշտակութիւնից չկեկավարուին և չսխալին և կամ որքան հնար է սակաւ սխալին, պէտք է միշտ յիշեն վերոյիշեալ «ծառն արմատով» է ծառ և տունն հիմամբ է տուն, խօսքերն և իրանց պատուաստելիքը հայ ծառի բնի վերայ պատուաստեն և իրանց յանձնելիք տան հիմն հայ ժայռի և ոչ աւազի վերայ դնեն։ Ամենքի ցանկութիւնն էլ բարի է. բայց այդ ցանկութեան իրագործման համար ընտրած միջոցներն են միայն սխալ։ որով և ցանկութիւնն էլ անկատար է մնում և վնասն էլ վերայ է գալիս։

Հայ ազգի մտաւոր և հոգեոր կեանքի արմատն և հիմն Ա. Էջմիածինն է իւր հաստատութիւններով, առանց սորա Հայութիւն երեակայելը ցնորք է, այնպէս ինչպէս առանց Վատիկանի ու պապութեան՝ քաթոլիկութիւն երեակայելը։ Հայ եկեղեցեաց մայրը, արմատը, Միածնաիջի տաճարն է, ամենայն բարեկարգութիւնք այստեղից պիտի տարածուին բոլոր հայ եկեղեցեաց մէջ, հայ մուաւոր հաստատութեանց հիմն Ա. Աթոռոյս ծեմարանն է, որ պիտի պատրաստէ այլ դպրոցների համար, հնար եղածի չափ, աւելի զարգացած, հոգեոր և աշխարհիկ գիտութեամբ զարդարուած և որ ամենանշանաւորն է, հայ հոգեուլ դաստիարակուած, իսկական մօր կաթամբ մնուած, ուսուցիչներ և ղեկալարներ։ Նա պիտի տայ և բանիբուն և ընդունակ եկեղեցական բարձրաստիճան և քարոզիչ պաշտօնեաներ, որոնք թէ ժաղովրդոց հոգեոր պիտոյքն պիտի հոգան և թէ նրանց համաձայն հայ եկեղեցւոյ՝ նոցա մօր ոգւայն հոգեպէս ղեկավարեն։

Այսպէս ուրեմն Ա. Էջմիածինն իւր հաստատութիւններով գոլով հայ ծառի արմատն՝ իրաւունք ունի հոգացողութեան

հայազգի հաստատութեանց կումիյ, որոնք նորա ճիւղերն են, ամեն մարդ ինքը կարող է կշռել և որոշել, որովհետեւ խնդիրն և տղայոց համար պարզ է:

Եթէ ծառի արմատը թոյլ է, չունի բաւականաչափ կերակուր, հողի անպարարտ լինելու պատճառով, զիանի կարող են նորա ճիւղերը սաղարթալից ու տերեւալից լինել, բազմաթիւ ծաղկներով զարդարիլ և բերել պառւղ առատ և անուշահամ, ԶԷ որ նորա արմատից կարեռը մնունդը չստանալով, կինին նուազ և տակաւ առ տակաւ կը որանան: Էջմիածնից՝ հայ ծառի արմատից հեռացած հայութիւն երեւակայելը ցնորք է, ասացինք, և այդ անուրանալի պատմական փաստ է. ապացոյցներ չեն միթէ այդ ճշմարտութեան բազմաթիւ հայ գաղթականութեանց կորուստն ու անհետանալն աշխարհիս ամեն ծայրերում. և ինչիցն էր դոցա կորուստն, եթէ ոչ Ա. Էջմիածնից՝ իրանց բնական արմատից անջատուելովը. վասն զի ծառն արմատովն է ծառ, առանց արմատի՝ կտրած ծառի թարմութիւնը վաղանցուկ է, ինչպէս և պատահեցաւ հայ ազգի այն հասարակութեանց, որոնք անջատուեցան իրանց արմատից՝ Ա. Էջմիածնից և շուտով բոլորովին յորացան, խոհեւ դարձան ու կոխան լինելով փշրտեցան: Նատ հեռու կերթայինք եթէ մենք այս մասին մի առ մի փաստեր առաջ բերելու լինէինք, նամանաւանդոր այդ աւելորդ էլ է, որովհետեւ այդ փաստերն ամեն խսկաշակերտի յայտնի են, որ իւր ազգի պատմութիւնը ուսել է կամ ամեն Հայի, որ հայ գրքերի ընթերցանութեամբ զբազուել է:

Ուրեմն եթէ հայ ազգը կամենում է իբրև առանձին հայ հոգեւորապէս և մոտաւորապէս ապրել. բայց ապրել, ինչպէս ապրում են մարդկութեան ընտիր անդամները կազմող ազգերն, նպաստելով իւր և ընդհանուրի բարօրութեան հոգեւոր դասդիմակութեամբ և մոտաւոր զարդացմամբ, պէտք է նա՝ հայ ազգն, առանձին ուշադրութիւն դարձնէ Ս. Էջմիածնայ՝ իւր արմատի վերայ. Հոգայ սորա ամեն միջոցները զօրացնելու, կազդուրելու իբրև արմատի, որպէս զի սա էլ կարողանայ հայ ազգի մասերին իրբեւ իւր ճիւղերին առատ և առողջարար կաթը ջամբել, զօրացնել նրանց, ծաղկեցնել և առատ ու անուշահամ պտուղներ բերել տալ: Այս մասին որքան պարտք կայ

մոտածելու և հոգալու հայ եկեղեցական դասի վերայ, կրկնապատիկ աւելի պարտք կայ հոգալու այդ մասին և ամբողջ ազգի վերայ և ձգտումն դէպի այս գաղափարի իրագործումն ու նէ ինը ունացումն է բայց մշացներէ մը տեղում, այլ մեայն զօրացնում է այն աղքէ-ը, որ է-ը առասդ և զախշար ճնիտ ջրով պէտէ զնայնէ բայց աղքէ հոգիւոր ծարաւու: Ազգի տուածը աղքիւրում չպիտի մընայ, այլ էլի տոկոսեօք պիտի վերադառնայ դէպի նա-բայց աւելի յարմարեցրած նորա ճաշակին և իրբեւ սննդարար կերակուր և գիւրամարս նորա ստամոքսի համար: Ի՞նչ է հայ ազգի ներկայ ամենակարեռոր պահանջն—եթէ ոչ դաստիարակութիւն ազգային - կրօնական հոգւով և գիտութիւն: — Նրան հարկաւոր են քարոզիչներ հայ եկեղեցու հոգւով զարգացած և գիտութեանց ներկուու ուսուցիչներ, նոյն ուղղութեամբ, նրկուսի աղքիւրն էլ պիտի լինի Ս. Աթոռս իւր հաստատութիւններով: Իրաւ է գիտութիւնք ամեն ուրեք մի են. նոքա ընդհանուր մարդկութեան սեպհականութիւնք են և ամեն ազգերի, մոտաւոր, բարոյական և նիւթական կեանքի բարօրութեան ծառայելու համար են: Բայց նոքա լոկ միջոցներ են, որոնք իւրաքանչիւր ազգ պիտի գործ դնէ իւր առանձնայատկութիւնքը կազդուրելու, իւր գոյութիւնն ապահովելու համար և ոչ ի կորուստ սոցա: Գիտութիւնք և արհեստք ամեն բարեկիրթ երկիրներում նոյնն են և գրեթէ միենոյն զարգացման աստիճանի վերայ են գտանաւում — բայց ֆրանսիացին նոյն գիտութիւններով ապրում է իրեւ ֆրանսիացի, Ռուսը նոյն գիտութիւնով ապրում է իրեւ Ռուս և Գերմանացին իրեւ Գերմանացի, ուստի և Հայն էլ նոյն գիտութիւնները ստանալով պէտք է ապրի իրեւ Հայ: Ֆրանսիացին, գերմանական գիտութիւն ուսանելով, չէ գառնում Գերմանացի և ընդհակառակն — որովհետեւ նոցանից իւրաքանչիւրն ունի առանձնայատկութիւն, որոց հիման վերայ դաստիարակւում է և որոց զարգացման նպաստում են գիտութիւնք. իւրաքանչիւրն ունի իւր հայրենիքն, որ սուրբ է նորա համար և որ նորա հոգացողութեան և ինամոց առարկան է, նորա հոգւով, նորա կեանքով է նա ապրում: Հայի հայրենիքն էլ այսօր իրեւ կրօնական ազգի — Ս. Էջմիածինն է — առանց սորա հայութիւն չկայ, առանց սորա հայ ազգի գոյութիւնն այսօր անհասկանալի է: Հայրենիքից զրկուած ֆրան-

սիացին, և Գերմանացին օտարանում է յաճախ իւր աղքից և օտարի մէջ ձուլում, Էջմիածնից զրկուած Հայերն էլ օտարաց մէջ ձուլուել են և կորել: Գիտութեանց հետ և աղքայնութեան ոգին պէտք է տիրէ մարդուս սրտին, որ միայն հայրենիքումն է և նորա յիշատակաց մէջ: Այսօր հայի հայրենիքն իւր եկեղեցին է. սորա կեդրոնը Ս. Էջմիածինն. այսուեղ է նորա հոգին սաւառնում: Ուստի և այն հայն որ իւր սրտի զգացմանց և մովքի մտածմանց առարկայ չէ անում Էջմիածինն և իւր պարտքը դէպի նա չէ ճանաչում, լինի նա թէ եկեղեցական թէ աշխարհական, շեղում է Հայութիւնից, իսկ նա, ով անտարբերութեամբ, չենք ուզում ասել թշնամութեամբ է նայում Ս. Էջմիածնայ վերայ—այդպիսին մայրատեաց զաւակ է. Հայ ազգի անդամութիւնից դուրս է: Հայ ազգը դարաւոր հիւանդ է—Ս. Էջմիածինն է նորա Պրոպատիկէ աւազանը: Այսուեղ է նորա հոգեոր բժշկութեան աղքիւրը: Այսպէս պիտի մուածէ Հայ ազգն և նրան բարի կլինի աշխարհիս երեսին:

### Ա. ԷջՄԻԱԾՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

**ԶԵՌԱԳՔԻՐ Ն<sup>o</sup> 2064 Տօնացոյց, գրած 1775 թուականին և որից տպագրուել է Սիմէօն Կաթողիկոսի Ժամանակ, Տօնացոյցն, որ բաւական տարածայնութեանց առիթ տուեց, իւր Ժամանակ, բայց յետոյ ընդունուեցաւ ի գործադրութիւն.**

«Փառք և գոհութիւն անլոելեան ձայնի ամենասրբոյ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Որոյ առատաձիր շնորհաքն և ողորմութեամբն, և օգնականութեամբ բազմերախտի և հոգեծնի Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորքին: Ի լրումն եկեալ կատարեցաւ տպեցումն նորափայլ գըրքոյ» որ կոչի Տօնացոյց: Աշխատասիրութեամբ և հոգաբարձութեամբ սրբազնակատար Հայրապետիս մերոյ Տեառն Սիմէօնի յոգնաշխատ և գերիմաստ Կաթուղիկոսիս ամենայն Հայոց: Ի վերատեսչութեան սրբոց տնօրինականց տեղեացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ Տեառն Պօղոսի քաջարան վարդապետին Վանեցւոյ: Եւ ի դիմողութեան արքայապերձ մայրաբաղաքին Կոստանդնուպոլսոյ. Միանգամայն ծայրագոյն նուիրակին Սրբոյ Էջմիածնի, և փոխանորդին վերսիշեալ սրբազն Հայրապետին մերոյ՝ Տեառն Զաքարիս Համեստափայլ վարդապետին: Ի թուոջ Փրկչին մերոյ Ռ-22Ն. և ի թուոջն մերում Ռ-ՄԻԴ. և յամսեանն ապրիլի եօթն ի Սուրբ Էջմիածին: